ՀԱՎԵԼՎԱԾ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԵՎ 13-Ի ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ ՄԵՋԲԵՐՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՇՆԱՄԱՆՔԻ, ՖԱՇԻԶՄԻ ՀԱՍՆՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՆ

Մեջբերումներ Ադրբեջանի նախագահի՝ 2021 թվականի ապրիլի 12-ին Բաքվում ունեցած ելույթից.

«Մենք աշխարհում ներկայացել ենք որպես հաղթող ժողովուրդ: Մինչդեռ, Հայաստանը պարտված երկիր է, մեր առջև ծնկի եկած երկիր, գլուխն ու վիզը ծռած երկիր է, և միշտ այդպես կլինի: Երբ տեսնում ենք իրենց կատարած ոճրագործությունները, սարսափում ենք: (…) Նրանք մզկիթներում կովեր ու խոզեր են պահել, անարգել են ողջ մահմեդական աշխարհը, ավերել գերեզմաններ, փորել գերեզմանները և հանել թաղված մարդկանց ոսկե ատամները: Եթե սա վայրի չէ, ի՞նչ է: Վայրին գուցե դեռ մեղմ բառ է: Ամբողջ աշխարհը տեսավ, թե որն էր նրանց հիմնական գաղափարական գործոնը: Իբրև թե դրանք փոքրաթիվ, բայց քաղաքակիրթ, մեծ քաղաքակրթություն ունեցող ժողովուրդ են՝ շրջապատված վայրի մահմեդականներով: Այս մասին ասվում էր Եվրոպայի յուրաքանչյուր անկյունում: Ռուսաստանում ամենուր ասում էին՝ օգնեք մեզ, թե չէ մեզ այստեղ կխեղդեն: Հիմա բոլորը տեսել են, թե որն է դրա քաղաքակրթությունը, ո՞րն է դրա մշակույթը, ո՞րն է դրա բարոյականությունը: Նա բարբարոս է, ով քանդում է գերեզմանները, փորում, հանում մահացածների ոսկե ատամները և մզկիթում խոզեր պահում, նա այլ անուն չունի»:

«Ես ասել էի, որ հայկական առաջին պետությունը [նկատի ունի ներկայիս ՀՀ-ն] ստեղծել են մեր պատմական հողում: 1918 թ. Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության առաջին որոշումներից մեկը Իրևանը Հայաստանին տալն ու մայրաքաղաք դարձնելն էր: Ես դատապարտել եմ դա: Ես ասել եմ, որ դա դավաճանություն էր, աններելի դավաճանություն: Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետությունը ադրբեջանական ժողովրդին մեծ ծառայություններ է մատուցել, բայց մենք չպետք է կոծկենք պատմությունը, մենք պետք է իմանանք այն: Մենք պետք է իմանանք, որ 1918-1920 թվականներին (…) մենք Իրևանը նվիրեցինք Հայաստանին: Մինչդեռ այդ ժամանակ Իրևանի ներկայացուցիչները առարկում էին: Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրանց ձայնին»:

«Մարտի դաշտում (…) ոչնչացվեց հայկական բանակը: Տասը հազար դասալիք ունեցող բանակը խայտառակություն է: Նրանք իրենց զինվորներին շղթայում էին մարտական հենակետերում, որ որպեսզի չփախչեն: Սա բարբարոսություն է, վայրենություն է սեփական զինվորի նկատմամբ»:

«Հողերը հավերժ կարող էին մնալ հայի ոտքի տակ: (…) Հայաստանին պետք է փակուղու մեջ մտցնեինք: Բոլոր տրանսպորտային, կոմունիկացիոն, էներգետիկ ուղիներն այնպես

անցկացրինք, որ Հայաստանից դուրս մնա: (…) Հայաստանը ընկավ փակուղու մեջ: Սա ինքնին հանգեցրեց նրան, որ Հայաստանից զանգվածային արտագաղթ սկսվեց: Հենց արտագաղթ է լինում, շուկան փոքրանում է, իսկ շուկայի փոքրանալու դեպքում ոչ ոք ներդրում չի անում: Մարդ պետք է խելագար լինի, որ այդ տարիներին և հատկապես հիմա Հայաստանում ներդրումներ անի»:

Մեջբերումներ 2021 թվականի ապրիլի 10-13-ն ADA համալսարանում (Ադրբեջանի դիվանագիտական ակադեմիայի համալսարանում) տեղի ունեցած՝ «Նոր հայացք Հարավային Կովկասին. Զարգացումն ու համագործակցությունը հակամարտությունից հետո» վերտառությամբ միջոցառման շրջանակներում Ադրբեջանի նախագահի՝ 2021 թվականի ապրիլի 13-ի ելույթից.

«Մենք ուզում ենք՝ երիտասարդ սերունդն իմանա, որ Զանգեզուրը Ադրբեջանի պատմական հողն է: Զանգեզուրը Հայաստանին է տրվել 1920 թվականին՝ 101 տարի առաջ: Մինչև դա այդ տարածքը մերն էր: Գյոյչա լիճը նրանք անվանում են Սևանա լիճ: Ընդամենը նայեք 20-րդ դարի սկզբի քարտեզին, և դուք այնտեղ Սևան չեք տեսնի: Նույնը վերաբերում նաև Իրևանին (Երևանին): Նրանք ավերել են Իրևանի պատմական հատվածը: Դա ակնհայտ փաստ է, ադրբեջանցիները, այդ թվում՝ իմ նախնիները, ապրել են այնտեղ:

Ես ասել եմ, որ մենք վերադառնալու ենք այնտեղ: Ես չեմ ասել, որ վերադառնալու ենք տանկերով: Ասել եմ, որ վերադառնալու ենք: Եթե մենք վերադառնում ենք Զանգեզուրի միջանցքին, եթե օգտագործում ենք այդ ճանապարհը, ապա ինչո՞ւ չվերադառնալ Իրևան: Ժամանակը կգա, մենք դա կանենք: Ես արտահայտում եմ իմ դիրքորոշումը»:

«…Թուրքիայի հետ հարաբերություններում Հայաստանի քաղաքականության վերանայման հետ կապված Հայաստանի ղեկավարության շրջանում որոշ նշաններ և թույլ մտքեր ենք տեսնում: Նույնիսկ հակամարտության ժամանակ ես բազմիցս այս մասին խոսել և ասել եմ, որ լիովին անընդունելի և տարօրինակ է, որ Հայաստանի նման փոքր, աղքատ և թույլ երկիրը տարածքային պահանջներ ունի այնպիսի մեծ և ուժեղ երկրի նկատմամբ, ինչպիսին Թուրքիան է: Նրանք այնքան են կառչել իրենց գաղափարական դոգմաներից և թուրքոֆոբիան դարձրել պետական քաղաքականություն, որ լիովին կորցրել են իրականության զգացումը»:

«…Նրանք (նկատի ունի հայերին) լավ բժիշկների կարիք ունեն: Ես բազմիցս ասել եմ, որ նրանց թունավորել են: Այս թույնը հիմնականում գալիս է իրենց սփյուռքից, որը Ֆրանսիայի հարավում, Կալիֆոռնիայում, Կրասնոդարի մարզում և այլ մայրաքաղաքներում շատ հանգիստ և գեղեցիկ վայրերում նստած կյանքն են վայելում: Նրանք ուզում են, որ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայերն իրենց պատանդը, գործիքը լինեն, որպեսզի իրենք կարողանան զբաղվել կտրուկ և շովինիստական գաղափարներով: Հայ հասարակությունը երկաթե վարագույրից ձերբազատվելու կարիք ունի: Ես կարողանում եմ այս անալոգիաների մասին խոսել, մինչդեռ նրանք ապրում են երկաթե վարագույրի հետևում և այս թունավոր գաղափարների ազդեցության տակ են: Մենք պատրաստ ենք նրանց աջակցել այս հարցում»:

«Միջազգային հարթակներում մեր գործադրած ջանքերի շնորհիվ մեր տարածաշրջանում համագործակցության նոր ֆորմատներ են ստեղծվել: Սա նպաստում է կայունությանն ու զարգացմանը, և, իհարկե, Հայաստանի կողմից վրեժխնդրության փորձերի ռիսկը զրոյական

պետք է լինի: Եթե նրանք դա անեն, ինչպես ասացի, մենք խաղաղություն ենք ուզում, բայց իրենց լիովին կոչնչացնենք: Նրանց ամբողջությամբ կոչնչացնենք և թույլ չենք տա, որ մոռանան այն, ինչ ասել եմ»:

«Ադրբեջանը, Թուրքիան, Ռուսաստանը, Իրանը տարածաշրջանային համագործակցության հետ կապված նույն մոտեցումն են կիսում և այժմ հիմնական ուշադրությունը ուղղված է տրանսպորտային ոլորտին, քանի որ այս հարցում տուժող կողմ չկա: Դրանից բոլորն են շահում: Հայաստանը լուռ միացել է, բայց իրենց հայտարարություններում ասում են, որ չեն միացել: Նրանք պետք է բուժեն այդ հիվանդությունը թուրքոֆոբիան և ադրբեջանաֆոբիան: Այսպիսով, շատ պարզ է, թե այս համագործակցությունը երկրների համար ինչ առավելություններ ունի: Կարծում եմ՝ Հայաստանն այն երկիրն է, որ առավելագույնը կշահի այդ առավելություններից, քանի որ այսօր նրանք Ռուսաստանի հետ երկաթուղային կապ չունեն, Իրանի հետ չունեն: Հայաստանից Իրան երկաթուղային ճանապարհ կառուցելու վերաբերյալ մի անիրատեսական ծրագիր կար: Այնուամենայնիվ կարծում եմ, որ նրանք հաշվարկներ արել և հասկացել են, որ դա 3 միլիարդ դոլար կկազմի: Լավ ծրագիր է, բայց գումարն ո՞վ է վճարելու: Սա խնդիր է: Այսպիսով նրանք հրաժարվեցին այդ ծրագրից»:

«Ինչ վերաբերում է Թուրքիայի և հարևան երկրների դեմ տարածքային պահանջներ առաջ քաշելուն, կարծում եմ, որ ճիշտ արտահայտություն եք գտել ՝ անհեթեթություն: Այլ կերպ ասած, մի երկիր, որն ունի 21-րդ դարում սահմանափակ հնարավորություններ, որը դժվարությամբ է ապահովում իր բնակչության նորմալ կենսամակարդակը, տարածքային տեսանկյունից իրենից 10 անգամ մեծ և 100 անգամ ուժեղ երկրի նկատմամբ տարածքային պահանջներ է առաջ քաշում: Մինչդեռ դա կրկին իրենց հոգեբանության հետ է կապված: Նրանք կարծում են, որ ամբողջ աշխարհն իրենց պարտական է: Այդ հոգեբանությունը նրանց գցել է ներկայիս նվաստացուցիչ վիճակի մեջ, բայց շարունակում են մտածել, որ իրենց պետք է օգնեն: Հավանաբար տեղյակ եք, որ Հայաստանի ղեկավարության հետ փակ դռների հետևում բանակցությունների ամանակ Եվրոպական Միությունը հրաժարվեց նրանց անհրաեշտ օգնություն ցույց տալ: Հայաստանը անդամակցում է ՆԱՏՕ-ի դեմ ստեղծված կազմակերպության՝ ՀԱՊԿ-ին: ՆԱՏՕ-ի դեմ ստեղծված կառույցին անդամակցող Հայաստանը մեղադրում է ՆԱՏՕ-ին, որ իրեն չի օգնել: Նրանք չեն գիտակցում, որ խնդիրը հենց իրենց մեջ է: Հայաստանի ամենամեծ վտանգը հենց իրենց հոգեբանությունն է: Սա պետք է փոխվի և գուցե դա շրջադարձային կետ կլինի, որպեսզի հասկանան թե մենք իրենց ինչ ծանր դաս ենք տվել: Նրանք պետք է հասկանան, որ եթե դու քեզ անկախ երկիր ես անվանում, ապա քո ժողովրդի հպարտությունը քո ձեռքում է և դու պետք է պաշտպանես քո ժողովրդին»:

«Ես հիշում եմ, որ մի քանի տարի առաջ հայ երիտասարդների հետ հանդիպմանը, երբ այն ժամանակվա հանցագործ նախագահ Սարգսյանին հարցրեցին, թե երբ ենք վերադառնալու Թուրքիայում գտնվող մեր հնագույն երկիր, նա ասաց, որ մեր սերունդը նվաճել է այս հաղթանակը, իսկ դա անելը արդեն ձեր պարտքն է: Հիմա որտե՞ղ է Սարգսյանը: Նա փախավ Ղարաբաղից: Պատերազմի ժամանակ նա այնտեղ էր: Նա եկել է այնտեղ, բայց հետո փախել է պատերազմի հերոս համարվող Քոչարյանի հետ: Նրանք վախկոտ են: Պաշտպանության նախկին նախարար Օհանյանը, ով կորցրել էր ոտքը Ղարաբաղյան առաջին

պատերազմում, կարող էր գլուխը կորցնել Շուշիում, եթե մեր ժամանումից մի քանի օր առաջ չփախչեր Շուշիից: Սա նրանց հոգեբանությունն է: Նրանք դաստիարակվել են այնպես, կարծես աշխարհի ամենամեծ ազգն են, արժանի են լիակատար աջակցության, բոլորը պարտական են իրենց, ոչ ոք չգիտի ինչու: Նրանք օգտագործում էին կեղծ պատմություններ՝ անձնական և կորպորատիվ առավելություններ ստանալու համար: Հիմա բոլորը հասկանում են, որ իրենց բանակը գոյություն չունի, նրանք ունեն 10 000 դասալիք, 10 000, «Անպարտելի բանակ»: Նրանց ողջ ընկալումը փոխվել է: Դուք միանգամայն ճիշտ եք, դա խեղում է, հոգեբանական խեղում: Բայց ո՞վ է պատասխանատու: Իրենք: Պատասխանատու են ոչ միայն իշխանություն ունեցողները, այլ ամբողջ հասարակությունը: Նրանք պետք է բացեն իրենց աչքերը և հասկանան, որ ստիպված են լինելու ապրել այս միջավայրում: Նրանք ավելի շատ շահագրգռված պետք է լինեն, որ Թուրքիան հարաբերություններ կառուցի իրենց հետ: Թուրքիան կարող է ապրել՝ հավերժ փակ պահելով իր սահմանը: Սա կարևոր է Հայաստանի համար: Մենք կարող ենք հավերժ ապրել: Օրինակ, եթե մենք խոսում ենք «Զանգեզուրի միջանցքի» մասին, որն այո, կապ է ստեղծելու Նախիջևանի հետ: Հիմա կապ չկա՞: Այո, կա: Դա նրանց համար է լինելու, և իրենք պետք է կատարեն այդ փոփոխությունը: Բայց եթե ինձ հարցնեք, կա՞ արդյոք Հայաստանի քաղաքական շրջանակներում մեկը, ով իրատեսորեն կգնահատի իրավիճակին: Ոչ: Նույնիսկ եթե այդպիսի մարդ կա, նա երբեք դա բացահայտ չի անի, քանի որ անմիջապես հարձակման կենթարկվի: Նրան անմիջապես քննադատելու են: Նրանք իրեն կանվանեն «թուրք», որը վիրավորանք է իրենց լեզվով: Նրան դավաճան կկոչեն և այլն»:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ